

Սյուզաննա Ազարյան

ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՎԱՆ ՃԳՆԱԺԱՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1991-1995 թթ.)

Մշակույթ, քաղաքականություն, կրթություն, ճգնաժամ, գիտություն,
պետություն, անկախություն

Քաղաքակրթության նոր դարաշրջանի անցնելու փուլում մարդկությունը կանգնած է նոր նպատակների ու մարտահրավերների առաջ: Հետևաբար մշակութային քաղաքանության պահպանության, մշակույթի զարգացման ու շարունակականության հարցը ձեռք է բերել արդիական նշանակություն: Հասարակության կայուն զարգացումն այսօր ուղղակիորեն կապված է մշակույթի հետ: Այս տեսանկյունից մշակութային քաղաքականություն և քաղաքական մշակույթ հասկացությունները թվում են, թե չեն լրացնում միմյանց, սակայն փոխկապակցված են, և դրանց ներդաշնակության դեպքում է միայն հնարավոր ունենալ ժողովրդավարական հանրապետություն, երբ նյութական արժեքներն ու սեփական հավակնությունները չեն դառնում գերակա:

Պետության մշակութային քաղաքականության հիմնական նպատակը մշակութային ժառանգության պահպանումն ու անխաթար փոխանցումն է սերումներին, մշակութային արժեքների մեկնաբանումը և տարածումը¹:

Նշված խնդիրների լուսաբանման համար անհրաժեշտ է հետադարձ հայացք նետել դեպի անցյալի մշակութային արժեքները և քաղաքականությունը, նորովի մեկնաբանել և իմաստավորել դրանք:

Հայաստանի Հանրապետության անկախության առաջին տասնամյակում երկրի մշակութային քաղաքականությունը, ելնելով սոցիալ-տնտեսական անբարենապատ իրավիճակից, հիմնականում ձգտում էր պահպանել մշակութային գործող կազմակերպություններն ու ենթակառուցվածքները, ավելի պակաս ուշադրություն էր դարձնում դրանց զարգացմանը: Քննարկվող ժամանակաշրջանում մշակութային քաղաքականությունը չէր հանապատասխանում տնտեսության աճի պահանջներին, չէր ձևավորվել մշակույթի կառավարման նախատիպ: Ավանդական մշակույթի շատ ձևեր ընթանում էին ինքնակարգավորման ուղիղով:

Միանգամայն ճիշտ է ասված, որ ՀԽՍՀ-ի մշակութային ոլորտը հանդիսանում էր ԽՍՀՄ-ի երեմնի հզոր և միաձույլ գիտակրթական համալիրի անբաժանելի մասը²: Մինչև ԽՍՀՄ-ի փլուզումը Հայաստանը գիտության զարգացման ցուցանիշներով

¹ Տե՛ս ՀՀ-ի մշակութային քաղաքականությունը, Հայեցակարգային հիմնադրությներ Հայաստանի Հանրապետությունում մշակութային պահպանման տարածման ու զարգացման, Երևան, 2003, էջ 3:

² Տե՛ս Մինասյան Է. Գ., Սոցիալ տնտեսական վերափոխումները ՀՀ-ում (1990-2003 թթ.), Երևան, 2003, էջ 196:

առաջնակարգ դիրքեր էր գրավում նախկին նիութենական հանրապետությունների գիտական հանրության շրջանակներում: Սակայն Հայաստանի անկախացումից հետո ստեղծված տնտեսական ծանր վիճակը, նյութական և ֆինանսական միջոցների անբավարարությունը, էլեկտրաէներգիայի և ջեռուցման բացակայությունը, գիտական կադրերի նվազումը և գիտական տեղեկության սղությունը հանգեցրին հանրապետությունում մտավոր գործունեության լճացման: Խզվեցին հիմնարար ու կիրառական գիտությունների և արտադրության միջև գոյություն ունեցող փոխադարձ կապերը, խաթարվեցին ժամանակին մեծ համբավ ծեռք բերած գիտական դպրոցները, գիտական և գիտամանկավարժական կադրերի վերարտադրության՝ տասնամյակների ընթացքում ձևավորված համակարգը, կազմալուծվեցին գիտական արդյունավետ հետազոտությունների նյութատեխնիկական հիմքերը¹: Հետխորհրդային առաջին տարիներին տուժեց նաև թանգարանային ոլորտը:

Հայաստանի երրորդ Հանրապետության հանրապետության առաջին տասնամյակի մշակութային կյանքի օպարգացումը կարելի է բաժանել փուլերի՝ առանձնացնելով երկուսը: Մեր ուսումնասիրությանը ենթակա է առաջին փուլը:

1991-1995 թթ. բնորոշ էր էներգետիկ ճգնաժամը: Մշակութային քաղաքականությունն իրականացնողները պատրաստ չէին նոր հարաբերություններին: Մշակույթի ոլորտի քաղաքականությունը փոխարինվեց գաղափարախոսությանը, անկախության հասմելու, ազգային գաղափարախոսություն սերմանելու և հետագայուն վերջինիս միջոցով առաջնորդվելու կարգախոսուներով: Շատ դիպուկ է նկատել պրոֆեսոր Է. Գ. Մինասյանը՝ նշելով, որ որդեգրած մշակութային քաղաքականության առումով թերևս էական դեր է խաղում մինչև օրս էլ տիրապետող այն թյուր մտայնությունը, թե տնտեսական և քաղաքական խոր ճգնաժամի ու հակամարտության պայմաններում մշակութային հարցերին ջանքեր ու միջոցներ նվիրելը անպատել ու անհարկի շռայլություն է:

Նախորդ ժամանակաշրջանի համեմատ 1995 թվականից առ այսօր մշակութային կյանքի ակտիվացում է նկատվում: Փոխվեց գործիչների վերաբերնունքը, վերացվ էներգետիկ ճգնաժամը, ավելին, ընդունվեց կրթության մասին օրենք: Արդյունքում պետության կողմից ֆինանսական միջոցներ տրամադրվեցին մշակութային նոր գաղափարների ու ծրագրերի իրականացմանը, ինչպես նաև կրթական համակարգի պահպանման ու զարգացման համապարփակ ծրագրեր մշակվեցին:

1991-1995 թթ. ընթացքում արմատականորեն փոխվեց բնակչության մասնագիտական զբաղվածության կազմը: Հատկապես մշակութային տեսանկյունից բացասական նշանակություն ունեցավ մասնագիտական շրջանակների քանակը կադրերի պատրաստման գործում, որ սովորաբար պետք է ապահովեր միջին խավի ձևավորումը: Դրան հակառակ, շատ արագ տեմպով հասարակության մեջ գերակշիռ թիվ կազմեցին մանր առևտորում ներգրավածները²: Մշակութային կյանքում դեռևս առկա էին

¹ Նոյն տեղում:

² Հայաստանի մասնագիտական զբաղվածության պատկերի փոփոխման, հասարակական կյանքի ապահովեսինականացման և դրա հետևանքների մասին, տես Շաքարյան Լ., «Պրոֆեսիոնալիզմի էրիկական տեսանկյունները պառականութական մտածելակերպում», Երևան, 1999, էջ 14:

պետական և համայնքային սեփականության կազմակերպությունների բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը թույլ կտար ավելացնել կազմակերպությունների թիվը և ներառել ֆինանսավորման այլ աղբյուրներ:

Ըստ պաշտոնական վիճակագրության, հանրապետության հանրակրթական դպրոցների շուրջ 77%-ը կարիք ուներ հիմնական կամ ընթացիկ վերանորոգման¹:

Կրթական հաստատությունների 38%-ը գործնականում չէր համապատասխանում կրթական նպատակներով օգտագործմանը, ավելին յուրաքանչյուր հիմնգերորդ դպրոցում բացակայում էր ջրամատակարարումը կամ գործում էր որոշակի ժամերի ընթացքում, 60%-ը չուներ բուժսպասարկման կետեր: Լուրջ խնդիր էր կրթական հաստատությունների սանիտարական հիմնական ծառայությունների բացակայությունը, այդ թվում՝ ջրահեռացումը և ջրամատակարարումը: Առավել անմիջաբարական էր վիճակը մշակույթի օջախներում²:

Այսպիսով, ինչպես նկատեցինք, կրթության և մշակույթի ոլորտում էապես նվագեցին հիմնական միջոցների ծավալները: Կարելի է նույնիսկ օրինաչափ համարել կրթական և մշակութային օջախների կապիտալ շինարարության ծավալների անկման դրսնորումները, եթե նկատի ունենանք պետական ֆինանների կտրուկ սակավացումը, բյուջետային քաղաքականությունը և մշակույթին, կրթությանն ու գիտությանը տրամադրվող պետական սուլ ծախսները: Այսպես, ըստ պաշտոնական վիճակագրության կրթության և գիտության բնագավառին հատկացված պետական միջոցների ամենակտրուկ անկումն արձանագրվել է 1993-94 թթ.³:

Անկախության առաջին տարիներին պետության աղքատությունը բացասաբար ազդեց գիտակրթական և մշակութային ծառայությունների գործունեության վրա: Այն արտահայտվել էր ոչ միայն աշխատողների սոցիալական վիճակի վատթարացման և նրանց մասնագիտական որակների իջեցման, այլև կապիտալ ներդրումների ու հիմնական միջոցների ծավալների կրճատման բնագավառում: Մասնավորապես պետական բյուջեից կրթության մեջ կատարված հատկացումները ոչ միայն նվազում էին, այլև ենթարկվում էին զգալի փոփոխությունների, որի արդյունքում ճնշաժամ էր ապրում գիտակրթական և մշակութային ամբողջ համակարգը: Բացի այդ, պետության վարած անհեռատես քաղաքականության հետևանքով երկրի ճյուղային գիտահետազոտական ինստիտուտների մեջ մասը՝ մոտ 80%-ը⁴, որոնք նախկինում կուտակել էին զգալի նյութատեխնիկական կադրեր, քայլայվեց: Ստեղծված իրավիճակից դուրս գալու համար անհրաժեշտ էր, որ գիտակրթական ու մշակութային համակարգերը իրականացնեին ինստիտուցիոնալ-կառուցվածքային վերափոխումներ:

¹Տես Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 1999 թվականին, Վիճակագրական ժողովագույն, Երևան, 2000, էջ 9:

² ՀՀ 2000 թ. պետական բյուջեի մասին օրենքի 14-րդ հոդվածով պաշտպանված էին միայն ըստ աշակերտների թվի ֆինանսավորման անցած դպրոցների պահպանման ծախսները:

³ Տես Մանասյան Յ., Աբգարյան Ռ., Գիտակրթական և մշակութային քաղաքականության դերը աղքատության հաղթահարման ՀՀ ռազմավարությունում, Երևան, 2002, էջ 15-16:

⁴ Նույն տեղում:

Տնտեսական ծանր պայմանների պատճառով շատ մտավորականներ մեկնեցին Հայաստանի Հանրապետությունից, որոնց մեջ գերակշռում էին առավել օժտված և կարողունակ ներկայացուցիչները, հատկապես երիտասարդ և միջին տարիքի գիտականները, որոնք ակնառու հաջողությունների էին հասել իրենց ընտրած գիտական ասպարեզում:

Հայաստանի գիտության ոլորտին բնորոշ կադրային տեղաշարժին հատուկ էր նաև ներքին արտահոսքը: Գիտնականներից շատերը, որոնք միջոցներ չունեին արտասահման մեկնելու, այնուամենայնիվ թողնում էին գիտական աշխատանքը և անցնում գործունեության այլ ոլորտ: Փաստորեն պետության անձարակության հետևանքներից էր, որ 1990-2001 թթ. Հայաստանից հեռացան շուրջ 1,3 մլն մարդ¹: Իշխանությունները չէին գիտակցում զանգվածային արտագաղթի ժողովրդագրական հետևանքները, որոնք բացասաբար էին անդրադառնում երկրի սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Կառավարությունը լրելյայն խրախուսեց գիտամշակութային ոլորտի ներկայացուցիչների արտահոսքը²: Մեծ թվով հայրենանվեր գիտնականներ, հատկապես ավագ սերնդի ներկայացուցիչներ, շարունակեցին իրենց գիտական աշխատանքները: Պետական միջոցների սղությունն ու բնակչության սոցիալական ծանր վիճակը բացասաբար էին անդրադառնում մշակույթի զարգացման և հասարակության՝ մշակութային արժեքներից օգտվելու սահմանադրությն պաշտպանված իրավունքի վրա: Այն իր հերթին հանգեցնում էր մշակույթի մարդկանց համընդհանուր օտարմանը՝ խաթարելով հոգևոր-մշակութային հարաբերությունները, որն էլ խոչընդոտ էր հանդիսանում հասարակության զարգացմանը³:

Հիմնականում 1992-1996 թթ., ինչպես նաև հետագա տարիներին, փոխվեց երիտասարդության կազմը: Նշված տարիներին քաղաքային երիտասարդության կյանքում զգալի փոփոխությունների պատճառ էր նորույթների նկատմամբ վերաբերմունք ցուցաբերելու, այդ թվում՝ դրանք էթնոմշակութային միջավայրին ադապտացնելու կուլտուրայի բացակայությունը⁴: Այդ շրջանում նպատակասլաց գաղափարախոսությունից զուրկ մշակութային կյանքը կատարյալ քաղաքական ճգնաժամ ապրեց: Եվ երբ մանրակրկիտ վերլուծության ենթարկենք ստեղծված իրավիճակը, կտեսնենք, որ այսօրվա իրողությունը մշակութային ճգնաժամի, մշակութային քաղաքականության թույլ տված բացթողումների արդյունք է: 2000 թ. միայն մշակվեց պետական հայեցակարգ, որով նախատեսվում էր պահպանել մշակութային ժառանգությունը և աջակցել գեղարվեստական գրականության զարգացմանը:

Ամփոփելով, կարող ենք նշել, որ մշակութային քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում ավելի արդյունավետ կարող էր լինել, եթե իշխանությունները

¹ Սինասյան Է. Գ., Սոցիալ-տնտեսական վերափոխումները ՀՀ-ում (1990-2003 թթ.), էջ 233:

² Սինասյան Է. Գ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները անկախության տարիներին 1991-2001 թթ., Ստեփանակերտ, 2010, էջ 64:

³ Տե՛ս Մանասյան Յ., Արգարյան Ռ., Աշվ. աշխ., էջ 8:

⁴ Թադևոսյան Ա., Մշակութային ինքնության պահպանման և վերարտադրության հիմնահարցը ազգային անվտանգության տեսանկյունից, Երևան, 2003, էջ 11:

Վարեհին գիտականորեն հիմնավորված մշակութային քաղաքականություն՝ հաշվի առնելով հանրապետությունում գտնվող գիտական կադրերի գործոնը:

Անշուշտ, կային նաև ծանրակշիռ պատճառներ՝ ավերիչ երկրաշարժը, նախ-կին միութենական հանրապետությունների հետ առևտրատնտեսական հարա-բերությունների տարերային խզումը, դարաբաղյան հակամարտությունը, դրա հետևանքով առաջացած տնտեսական շրջափակումը¹:

Փաստորեն այս ամենը դարձան քաղաքական ճգնաժամի իրական պատճառ: Սակայն հանրապետության դեկավարությունը չկարողացավ ավելի ծկուն և նուրբ մշակութային քաղաքականությամբ մեղմացնել ստեղծված իրավիճակը՝ կանխելով գիտնականների արտահոսքը և մշակութային արժեքների խաթարումը:

Այսպիսով, ներկայացնելով 1991-1995 թթ. գիտամշակութային ոլորտի տագնա-պալի զարգացումներն արտաքին ուժեղ ցնցումների ենթարկված և լայնամասշտար հասարակական ձևակիրականություններ վերապրող նորօրյա Հայաստանում՝ կասկած չկա, որ Հայաստանի համար ևս զարգացման համարդկային ուղիով վերստին ըն-թանալու հիմնական միջոցը մարդկային կապիտալի ավելացումն է: Անառարկելի է նաև, որ Հայաստան երկրի այլևս աղքատացած ժողովուրդը գիտե կրթամշակութա-յին արժեքների «քանալիով» պատմական փորձություններից ելք գտնելու կերպը:

Անկախության առաջին տասը տարիները Հայաստանին հնարավորություն ընձե-ռեցին քայլել ինքնավարության տանող ուղիով: Հայաստանը ծեռնամուխ եղավ ան-կախ և ժողովրդավարական պետության ստեղծման ու ազատական տնտեսության խնդիրների լուծմանը՝ այն էլ այսպիսի փոփոխությունների համար անբարենպաստ պայմաններում²:

Ամփոփելով՝ նշենք, որ անկախացած Հայաստանի նորաստեղծ կառավարությու-նը թերագնահատեց գիտության դերը, չհասկացավ, որ այն ազգային հարստություն է, որ կարող է մեծապես նպաստել տնտեսական զարգացման և բնակչության բարո-յահոգեբանական վերափոխումներին:

Հայաստանի անկախացմանը հաջորդած ժամանակաշրջանում մշակութային ինքնության պահպանման խնդիրը նորից ձեռք է բերում առաջնային նշանակություն:

Սյուզաննա Ազարյան, Մշակութային քաղաքականությունը Հայաստանի Հանրապե-տությունում քաղաքական ճգնաժամի տարիներին (1991-1995 թթ.). – Հասարակության կա-յուն զարգացումն այսօր ուղղակիրեն կապված է մշակույթի հետ: Ուստի պետության մշակութային քաղաքականության հիմնական նպատակը մշակութային ժառանգության պահպանում ու անխաթար փոխանցումն է սերունդներին: Խոսելով քննարկվող ժամանակահատվածում թույլ տված բացրողում-ների մասին՝ կարող ենք նշել, որ այսօր առավել քան երբեմ հնարավոր է արագործն հալթահարել անվերջանալի թվացող նյութական դժվարությունները և արդյունավետորեն վերակառուցել ազգային տնտեսությունը հենց կրթության ու մշակույթի առաջնահերթ զարգացման միջոցով: Ուստի այդ խնդիր-ների լուծմանը պետք է ուղղված լինի պետության մշակութային քաղաքականությունը:

¹ Տե՛ս Հայաստանի մշակութային քաղաքականության ազգային գեկուց, Երևան, 2004:

² Նույն տեղում:

Сюзанна Азарян, Культурная политика в Республике Армения в годы политического кризиса (1991-1995 гг.) –

Azaryan Suzanna, The cultural politics in Republic of Armenia in the years of political crisis (1991-1995) – Today the stable development of the society directly relates to the culture. The main purpose of cultural politics of the state is to save and transmit the cultural heritage to the generations. Discussing the mistakes of the given period we can mention that today it is possible to overcome the hardships and rebuild effectively the national economy through primary development of the education and culture.

*Այուզաննա Ազարյան – ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի
մագիստրատուրայի շրջանավայրը*

